ԵՐՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-770[2]-27.04.2015-ԱՄ-010/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«35. Դեղերի պետական գրանցման համար՝

ա) դեղերի համար, այդ թվում՝ նոր, վերարտադրված, կենսատեխնոլոգիական ծագման, արյունից կամ պլազմայից ստացված, իմունաբանական (պատվաստանյութեր, շիճուկներ, ալերգածիններ), ռադիոակտիվ, բազմաբաղադրատարր հոմեոպաթային, անասնաբուժական	բազային տուրքի 60-ապատիկի չափով
բ) դեղերի յուրաքանչյուր դեղաչափի և (կամ) դեղաձևի համար	բազային տուրքի 40-ապատիկի չափով
գ) գրանցված դեղերի նոր ցուցում(ներ)ի համար	բազային տուրքի 40-ապատիկի չափով
դ) գրանցված դեղերի նոր համակցությունների համար	բազային տուրքի 60-ապատիկի չափով
ե) ավանդական և բուսական դեղերի համար (այդ թվում՝ փաթեթավորված և պիտակավորված դեղաբուսական հումք, բուժիչ թեյեր)	բազային տուրքի 10-ապատիկի չափով
զ) միաբաղադրատարր հոմեոպաթային դեղերի առաջին դեղաձևի,	բազային տուրքի

դեղաչափի, յուրաքանչյուր հաջորդ դեղաձևի, դեղաչափի, նոր ցուցում(ներ)ի համար	5-ապատիկի չափով
է) հիվանդությունների հարուցիչների, ինչպես նաև դրանց փոխանցող միջատներին, մակաբույծներին ոչնչացնող հակասեպտիկները և հակապարազիտային դեղերը, որոնք նախատեսված են մաշկի, լորձաթաղանթի, մազերի, եղունգների համար	բազային տուրքի 20-պատիկի չափով
ը) պետական գրանցման հավաստագրի վերաձևակերպման համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
թ) վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 60-ապատիկի չափով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 19-րդ հոդվածի «2.ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.8 կետով՝

2.8 Դեղերի մեծածախ իրացում՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 50-րդ,51-րդ, 52-րդկետերով.

50.Պատշաճ արտադրական գործունեության հավաստագիր տալու համար	տարեկան՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով
51.Պատշաճ բաշխման գործունեության հավաստագիր տալու համար	տարեկան՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով
52.Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծման կամ արտահանման հավաստագիր տալու համար՝ տարեկան	բազային տուրքի 5-ապատիկի չափով

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո: